ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

№24/ 202

Ձեր _____ «22» 02 2019թ.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
ՀԿ-ի նախագահ Շ. Դոյդոյանին

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր 20.02.2019թ. թիվ 341-62 հարցման՝ պարզաբանում ենք.

2018 թվականի ընթացքում զաղտնազերծվել են Ոստիկանության գործունեության տարբեր ոլորտներին (այդ թվում՝ օպերատիվ-հետախուզական) առնչվող տասնյակ փաստաթղթեր:

Հարկ է նշել, որ պետական կամ ծառայողական գաղտնիք պարունակող փաստաթղթերի գաղտնազերծումը ինքնին չի ենթադրում, որ դրանցում այլևս չկան օրենքով պահպանվող գաղտնիք համարվող տեղեկություններ (օրինակ՝ անձնական տվյալներ և այլն):

Ձեր կողմից հայցվող տեղեկությունը՝«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի իմաստով հնարավոր չէ նույնականացնել որպես կոնկրետ անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երևույթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված և ձևավորված տվյալներ:

Ելելով վերոգրյալից, հայտնում ենք, որ կոնկրետ փաստաթուղթ մատնանշելու դեպքում հայցվող տեղեկության տրամադրման իրավաչափությունը կքննարկվի լրացուցիչ:

Հարգանքով՝

ՊԵՏ, ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ